Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 464 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԱՐՄԱՎԻՐԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է՝ բարելավել «Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության սաների ուսումնական գործընթացի պայմանները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952):
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	75,000,000 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	«Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Աբովյան փողոց, 149 շենք, ՀՎՀՀ՝ 04402472)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հուլիսի 10-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) նախատեսվում է իրականացնել «Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության մարզադահլիճի և հարակից սենյակների մասնակի վերանորոգում, նախամուտքերի դռների փոխարինում՝ 14,000,000 դրամ. 2) «Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վար–ժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հատակների մոնտաժման նպատակով ռետինե հատակների ձեռքբերում և ներմուծում՝ 4,500,000 դրամ. 3) մարզական գույքի ձեռքբերում և ներմուծում ու նվիրաբերում «Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ 38,000,000 դրամ. 4) ավտոբուսի ձեռքբերում և ներմուծում ու նվիրաբերում «Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ 18,500,000 դրամ. 5) միջոցառումները նախատեսվում են իրականացնել 2024 թվականի հուլիսի 10-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակա–հատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) մարզադահլիճի և հարակից սենյակների մասնակի վերանորոգման, նախամուտքերի դռների փոխարինման աշխատանքներ՝ 14,000,000 դրամ. 2) ռետինե հատակների ձեռքբերում և ներմուծում՝ 4,500,000 դրամ. 3) մարզական գույքի ձեռքբերում և ներմուծում՝ 38,000,000 դրամ. 4) ավտոբուսի ձեռքբերում և ներմուծում՝ 18,500,000 դրամ:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

03.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ